

(Բընան, Թոլսթոյ եւ մեր Սեւակը) կը գրեն.- "Խաչին վրայ մարդ մ'է որ կը մեռնի. Աստուած մ'է որ կը ծնի": Աւելորդ պիտի ըլլար հոս ջատագովութեան դիմել Արիոսական այս ամբարիշտ ուսուցումին դէմ:

Կարն ըլլալու համար. "Եթէ մարդն էր որ մեռաւ խաչին վրայ, վայ մեզի. փրկուած չեմք եւ ոչ ոք":

Մոլորեցնող, հաւատփն թմբեցուցիչ ներարկող տողեր են մեր սիրելի բժիշկին արտայայտութիւնը.

"Իր (Յիսուս) միամիտ կենսագիրներու կողմէ յօրինուած են (հրաշքները Յիսուսի) շահեկան հանգամանք մը տալու համար պատմութեան . . . հրաշքներ կան որոնց վրայ աւետարանիչները համաձայն չեն, ինչպէս Ղազարոսին յարութիւնը":

Ղազարու յարութիւնը միայն Յովհ. աւետարանիչ կու տայ (ԺԱ. Գլուխ): Այդ մասին աւետարանիչներու միջեւ անհամաձայնութեան հարց գոյութիւն չունի:

Հանելի է կարդալ Սեւակի յօդուածը, իբրեւ տարբեր մօտեցում մը "իր Յիսուսին", լոկ վայելք մը ունենալ ու ընթերցանութեան. այդքան միայն:

"Մեր Սեւակը կը սիրենք, բայց աւետարանի ճշմարիտ Յիսուսը աւելի կը սիրենք":

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՋԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Տ. ԳԱԼՈՒՍՏ ՔՀՆՅ. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ

Ընդառաջելով Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Գեորգ. Տ. Զաւէն Արք. Զինչինեանի փափաքին, Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը քահանայ ձեռնադրեց եւ օծեց, Ամմանաքնակ Աւետիք Դարբինեանը, ծառայելու համար Եգիպտոսի Թեմին մէջ:

Օգոստոս 13 եւ 14ին Աւետիք Դարբինեան Կիսասարկաւագ եւ Սարկաւագ ձեռնադրուեցաւ, ժառանգաւորաց Վարժարանի չորս աշակերտներու հետ, եւ քահանայի ձեռնադրութիւն եւ օծում ստացաւ Սեպտեմբեր 3 եւ 4ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Սրբազան Պատրիարքի, եւ խարտաւիլակութեամբ Լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի, եւ Վերակոչուեցաւ Տ. Գալուստ Քահանայ: Քառասունքի առանձնացման շրջանը Տ. Գալուստ անցուց Ս. Փրկիչ վանքին մէջ

պահեցողութեամբ, ընթերցողութեամբ, եւ արարողութեանց եւ խորհուրդներու կատարման վարժութեամբ: Իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Հոկտեմբեր 8, Ուրբաթ առաւօտ, Սուրբ Գլխադրի մատուռին մէջ, ի ներկայութեւն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր:

Նորընծայ Տ. Գալուստ Քահանայ իր ուխտի պատարագները մատոյց Բեթղեհէմի Ս. Քարայրին մէջ, Երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարի Քրիստոսի Ս. Գերեզմանի եւ Գեթսեմանի ձորին մէջ Ս. Աստուածածնայ Տաճարի Ս. Սեղանի վրայ: Եւ Հոկտեմբեր 14ին մեկնեցաւ Ամման այնտեղէն իր երէցկնոջ հետ միասին փոխադրուելու համար Գահիրէ, ուր պիտի ծառայէ իբրեւ հոգեւոր հովիւ եւ դաստիարակ, հովանիին ներքեւ Առաջնորդ Գեորգ. Տ. Զաւէն Արք. Զինչինեանի: